Ուղեցույց

Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար

www.coe.int/children

Կառուցելով Եվրոպա՝
երեխաների հետ և
երեխաների համար

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Ուղեցույց Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար

Նախարարների կոմիտեի
հանձնարարական CM/Rec(2018)7

Եվրոպայի խորհուրդ

Անգլերեն հրատարակություն:

Guidelines to respect, protect and fulfil the rights of the child in the digital environment Recommendation CM/Rec(2018)7 of the Committee of Ministers

Սույն փաստաթղթի բոլոր մասերի թարգմանությանն առնչվող հարցերը պետք է ուղղվեն հաղորդակցության վարչություն (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int): Սույն փաստաթղթին առնչվող մնացած նամակները պետք է ուղղվեն դեմոկրատիայի ընդհանուր վարչություն

Կազմը՝ փաստաթղթերի և հրապարակումների թողարկման բաժանմունքի (SPDP), Եվրոպայի խորհուրդ:

Նկար՝ © Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, 2018թ. նոյեմբեր

Հայերեն թարգմանությունը կատարվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից Կասպերսկի Լաբորատորիա ընկերության աջակցությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 5

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ CM/REC(2018)7 ՈՒՂԵՑՈՒՅՑ ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐԳԵԼՈՒ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 11

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ 11

2. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 12

2.1. Երեխայի լավագույն շահերը 12

2.2. Երեխայի զարգացող կարողությունները 12

2.3. Խտրականության չենթարկվելու իրավունք 12

2.4. Լսելի լինելու իրավունք 13

2.5. Շահագրգիռ այլ կողմերի ներգրավելու պարտավորվածությունը 13

3. ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐԳԵԼՈՒ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ 14

3.1. Թվային միջավայրի մատչելիություն 14

3.2. Կարծիքն ազատորեն արտահայտելու և տեղեկատվության ազատության իրավունք 15

3.3. Մասնակցություն, խաղի մեջ ներգրավվելու, խաղաղ հավաքների և միավորումների իրավունք 16

3.4. Գաղտնիության և տվյալների պաշտպանություն 17

3.5. Կրթության իրավունք 19

3.6. Պաշտպանության և անվտանգության իրավունքը 21

3.7. Իրավական պաշտպանության միջոցները 24

4. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 25

4.1. Իրավական համակարգ 25

4.2. Քաղաքական և ինստիտուցիոնալ համակարգեր 27

4.3. Ազգային մակարդակի համագործակցություն և համադրում 31

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԴՐՈՒՄ 32

Նախաբան

Եվրոպայի խորհրդի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության, առանցքային նպատակներից մեկը ընդգրկուն, թափանցիկ և անվտանգ համացանցի (այդ թվում՝ այլ ՏՀՏ) ապահովումն է բոլորի՝ ներառյալ երեխաների համար՝ պաշտպանելով նրանց իրավունքները: Իր թեմատիկ ու հատվող ռազմավարությունների միջոցով Եվրոպայի խորհուրդը միջոցներ է ձեռնարկում թվային միջավայրում երեխաների իրավունքներն ընդարձակելու և նրանց բռնություններից պաշտպանելու ուղղությամբ:

Նորարարական տեխնոլոգիաների միջավայրը մեծ ազդեցություն է ունենում երեխաների կյանքի վրա՝ բազմաթիվ առումներով՝ ստեղծելով հնարավորություններ և ռիսկեր նրանց իրավունքների ու բարեկեցության համար: Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու նպատակով նախատեսված ուղեցույցներն ընդունելու հետ մեկտեղ կառավարություններին առաջարկվում է վերանայել իրենց երկրների օրենսդրությունը, քաղաքականությունը և գործելակերպը՝ ապահովելով դրանց բավարար անդրադարձը երեխաների իրավունքների պաշտպանության բոլոր տեսանկյուններին: Պետությունները պետք է երաշխավորեն նաև, որ բիզնես կառույցները և մյուս կարևոր համարվող գործընկերները համապատասխանում են մարդու իրավունքների պաշտպանության առկա պահանջներին և պատասխանատվություն կկրեն չարաշահումների դեպքում, միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, պետք է խթանեն նաև բիզնես կառույցների ներգրավվածությունն այդ գործում և ապահովեն լիարժեք համագործակցություն:

Եվրոպայի խորհրդի՝ Երեխայի իրավունքների ռազմավարության (2016-2021թթ.), Համացանցի կառավարման ռազմավարության (2016-2019թթ.), ինչպես նաև Համացանցի օգտատերերի մարդու իրավունքների պաշտպանության մասին ուղեցույցները կազմում են հիմնական կանոնների մի ամբողջություն, որը կարող է օգնել պետություններին՝ ապահովելու երեխաների շահերի առավելագույն պաշտպանությունը նորարարական տեխնոլոգիաների բարդ, բայց հետաքրքրաշարժ աշխարհում:

Եվրոպայի խորհրդի ուժեղագույն կողմերից մեկն իրավական ստանդարտներ ընդունելու ունակությունն է, որն աջակցում է պետություններին՝ստեղծելու այնպիսի համակարգեր, որոնք նպաստում են մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի միջավայրի ապահովմանը, ժողովրդավարության խթանմանը և օրենքի գերակայության պաշտպանությանը: Հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների առաջացման արագությունը, ուղեցույցներն առաջարկում են միջոցներ ձեռնարկել նաև այն ռիսկերի դեմ, որոնց հետ բախվում են երեխաները վերիրական (վիրտուալ) աշխարհն ուսումնասիրելու և բացահայտելու ընթացքում:

Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչ
Դեմոկրատիայի բաժնի գլխավոր տնօրեն

Նախարարների կոմիտեի հանձնարարական անդամ-պետություններին CM/Rec(2018)7 Ուղեցույց թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2018 թվականի հուլիսի 4-ին փոխնախարարների 1321-րդ հանդիպման ընթացքում)

Ներածություն

Նախարարների կոմիտեն ըստ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի բ կետի՝

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև ավելի սերտ միասնություն հաստատել՝ ընդհանուր ժառանգություն հանդիսացող նպատակներն ու սկզբունքները պաշտպանելու և խթանելու համար, մասնավորապես՝ խթանելով ընդհանուր քաղաքականությունն ու չափանիշները,

վերահաստատելով անդամ-պետությունների հանձնառությունը՝երաշխավորելու, որ յուրաքանչյուր երեխա ունենա ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (ԵԻԿ) և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (ETS թիվ 5) և դրանց արձանագրություններով ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության ամբողջական շրջանակ, որը պետք է լիովին հարգվի, պաշտպանվի և իրացվի՝ տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ,

հաշվի առնելով համապատասխան միջազգային և եվրոպական այլ կոնվենցիաների շրջանակներում ստանձնած այնպիսի պարտավորությունները և հանձնառությունները, ինչպիսիք են՝ վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (ETS թիվ 163), Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան (ETS թիվ 108), Կիբեռհանցագործության մասին կոնվենցիան (ETS թիվ 185) և դրա Լրացուցիչ արձանագրությունը, Համակարգչային համակարգերով կատարվող ռասիստական և այլատյացության բնույթի գործողությունների քրեականացման վերաբերյալ (ETS թիվ 189), Եվրոպայի խորհրդի Մարդկային թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիան (CETS թիվ 197), Եվրոպայի խորհրդի կոնվենցիան սեռական շահագործման և սեռական չարաշահումներից երեխաների պաշտպանության մասին (CETS թիվ 201), Կանանց

նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան (CETS թիվ 210) և հաշվի առնելով այս բնագավառում Նախարարների Կոմիտեի և ԵԽ խորհրդարանական վեհաժողովի առաջարկները, որոշումները և հուշագրերը,

գիտակցելով, որ թվային միջավայրը բարդ է, զարգանում է չափազանց արագ և ազդեցություն է թողնում երեխայի կյանքի վրա՝ գրեթե բոլոր տեսանկյուններից՝ ստեղծելով հնարավորություններ և վտանգներ երեխաների բարեկեցությանն ու իրավունքների համար,

գիտակցելով, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) երեխաների կյանքում կարևոր միջոցներ են՝ կրթական, սոցիալական, և ինտեգրման հարցեր լուծելու համար, բայց միևնույն ժամանակ, դրանց օգտագործումը կարող է առաջացնել բռնության և շահագործման ռիսկեր,

հաշվի առնելով, որ Երեխայի իրավունքների մասին ԵԽ ռազմավարությունն (2016-2021թթ.) իր գերակա ուղղություններից մեկն է համարում թվային միջավայրում երեխայի իրավունքների պաշտպանությունը, և որ Եվրոպայի խորհրդի Համացանցի կառավարման ռազմավարությունը (2016-2019թթ.) մատնանշում է, որ համացանցը պետք է լինի անվտանգ, ապահով, թափանցիկ ու նպաստավոր միջավայր բոլորի, այդ թվում՝ երեխաների համար, առանց խտրականության,

գիտակցելով, որ երեխաներին պետք է ցուցաբերվի աջակցություն՝ նորագույն տեխնոլոգիաները բացահայտելու և օգտագործելու ընթացքում, հարգելով թե՛ նրանց, թե՛ այլոց իրավունքներն ու արժանապատվությունը,

հստակ որոշելով արդյունավետորեն նպաստել երեխաների մասնակցությամբ հետևողական քաղաքականության մշակման գործընթացին, որը հաշվի է առնում այդ միջավայրում հնարավորությունների և ռիսկերի փոխկապակցվածությունը և երեխաների իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար համապատասխան միջոցների առկայությունը երաշխավորելու անհրաժեշտությունը,

ընդգծելով, որ երեխաների իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար հիմնական պատասխանատվությունը կրում են պետությունները, և վերահաստատելով ծնողներին կամ խնամակալներին տրվող իրավունքները, դերն ու պատասխանատվությունը, ելնելով երեխայի լավագույն շահերից և զարգացման կարողություններից, երեխաների կողմից իրենց իրավունքներն իրացնելու համապատասխան ուղղորդումներից և ուղեցույցներից,

ընդունելով նաև, որ բիզնես կառույցները պարտավոր են հարգել մարդու, այդ թվում՝ երեխաների իրավունքները, ինչպես հաստատվել է անդամ-պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2016)3 հանձնարարականում, որն առնչվում է մարդու իրավունքներին և ձեռնարկատիրական գործունեությանը, Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի ընդհանուր մեկնաբանությունը թիվ 16(2013), պետական պարտավորությունները՝ որոնք առնչվում են երեխաների իրավունքների վրա բիզնես կառույցների ազդեցությանը, Միավորված ազգերի կազմակերպության հիմնական սկզբունքները ձեռնարկատիրական գործունեության և մարդու իրավունքների վերաբերյալ (2011), Եվրոպայի խորհրդի ուղեցույցները՝ կիբեռհանցագործությունների դեմ իրավապահ մարմինների և համացանցային ծառայություններ մատուցողների միջև համագործակցության վերաբերյալ (2008), համացանցային ծառայություններ մատուցողների համար Մարդու իրավունքների ուղեցույցը (Եվրոպայի խորհուրդը և EuroISPA) (2008), առցանց խաղեր տրամադրողների համար նախատեսված Մարդու իրավունքների ուղեցույցը (Եվրոպայի խորհուրդ և ISFE) և Երեխաների իրավունքները և Գործարար

սկզբունքները (2012)՝ կազմված ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ գլոբալ կոմպակտ-ի և Փրկեք երեխաներին ՀԿ-ի կողմից,

գիտակցելով, որ այս ոլորտում քաղաքականությունը պահանջում է հանրային և մասնավոր, իրավական և կամավոր կողմերի համագործակցություն, որ բոլոր համապատասխան պետական և մասնավոր շահագրգիռ կողմերը պատասխանատվություն են կրում թվային միջավայրում երեխայի իրավունքների պաշտպանության համար, և որ անհրաժեշտ է նրանց միասնական գործողությունների իրականացում,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններում հարցազրույցի մասնակցած երեխաների կարծիքները և տեսակետները,

հաշվի առնելով պետություններին և մյուս շահագրգիռ կողմերին օգնելու համար նախատեսված ուղեցույց մշակելու անհրաժեշտությունը՝ թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար համապարփակ, ռազմավարական քաղաքականություն որդեգրելու գործընթացում, հիմնվելով ՄԱԿ-ի Երեխաների իրավունքի կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված չափորոշիչների վրա և հաշվի առնելով երեխաների մասնակցությունը՝

Առաջարկվում է անդամ-պետությունների կառավարություններին.

1. վերանայել օրենսդրությունը, քաղաքականությունը և գործելաոճը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը սույն Ուղեցույցի հավելվածում ներկայացված առաջարկություններին, սկզբունքներին և հետագա ուղղորդումներին, խթանել դրանց իրականացմանը բոլոր համապատասխան ոլորտներում և գնահատել պարբերաբար կատարված միջոցառումների արդյունավետությունը՝ համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցությամբ.
2. երաշխավորել, որ այս առաջարկությունը, ներառյալ հավելվածում առկա ուղղորդումները, թարգմանվում և հնարավորինս լայնորեն տարածվում են իրավասու մարմինների և շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ խորհրդարանների, մասնագիտացված պետական կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև երեխաների միջև՝ երեխաների համար հասկանալի կերպով, հաղորդակցության մատչելի միջոցներով, ձևերով և ձևաչափերով.
3. պահանջել բիզնես կառույցներից, որպեսզի նրանք կատարեն իրենց պարտավորությունները՝ ուղղված թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելուն և իրականացնել կիրառական նշանակության գործողություններ, խրախուսել նրանց համագործակցությունը համապատասխան պետական շահագրգիռ կողմերի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և երեխաների հետ՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային և եվրոպական չափանիշները և ուղղորդումները.
4. համագործակցել Եվրոպայի խորհրդի հետ, ստեղծելով, իրականացնելով և վերահսկելով ռազմավարական ծրագրեր, որոնք իրացնում, պաշտպանում և հարգում են երեխայի իրավունքները թվային միջավայրում և կանոնավոր կերպով տարածել ռազմավարական ծրագրերի նմուշներ, գործողությունների ծրագրեր, օրենսդրության և հաջող փորձի օրինակներ, որոնք առնչվում են այս առաջարկության իրականացմանը.
5. ուսումնասիրել հավելվածում նշված առաջարկության և ուղղորդումների իրագործումը, Նախարարների կոմիտեի շրջանակներում և համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ առնվազն հինգ տարին մեկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախակի պարբերականությամբ:

Հավելված
CM/Rec(2018)7
հանձնարարականի

Թվային միջավայրում երեխաների իրավունքներն իրացնելու, պաշտպանելու և հարգելու մասին ուղեցույց

1. Նպատակը և առարկան

Միջազգային և եվրոպական պարտադիր իրականացման ենթական գործիքակազմերն ու չափանիշները սահմանում են պարտավորություններ կամ տրամադրում են չափորոշիչներ անդամ-պետությունների համար՝ թվային միջավայրում մարդու իրավունքները և երեխաների հիմնարար ազատություններն իրացնելու, պաշտպանելու և հարգելու նպատակով: Յուրաքանչյուր երեխա, որպես անհատ իրավակիր, պետք է կարողանա իրացնել իր իրավունքները և հիմնարար ազատություններն ինչպես առցանց, այնպես էլ ցանցից դուրս:

Սույն ուղեցույցի նպատակը համապատասխան շահագրգիռ կողմերին աջակցություն տրամադրելն է՝ մարդու իրավունքների միջազգային և եվրոպական կոնվենցիաներով ու չափորոշիչներով ամրագրված իրավունքների իրականացման հարցում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային օրենքի շրջանակում: Ուղղորդումները նպատակ ունեն՝

ա. կողմնորոշել պետություններին՝ թվային միջավայրում երեխաների իրավունքների լիարժեք իրացմանը նպաստող օրենսդրության, քաղաքականության և այլ միջոցների մշակման և կիրառման հարցում և անդրադարձ կատարել այն ազդակների ամբողջական շարքին, որոնցով թվային միջավայրն ազդում է երեխաների բարեկեցության և մարդու իրավունքների վրա.

բ. նպաստել, որ պետությունների կողմից համապարփակ ռազմավարական և համակարգված մոտեցում մշակվի, իրականացվի և վերահսկվի՝ ներառելով սույն ուղղորդումներում ներկայացված սկզբունքները.

գ. երաշխավորել, որ պետությունները բիզնես կառույցներից և շահագրգիռ կողմերից պահանջեն ստանձնել պարտավորություններ՝ երեխաների

իրավունքները թվային միջավայրում հարգելու վերաբերյալ և խրախուսել նրանց՝ սույն իրավունքների աջակցման և տարածման հարցում.

դ. երաշխավորել, որ ազգային և միջազգային մակարդակով կհաստատվի համագործակցության մթնոլորտ՝ թվային միջավայրում երեխայի իրավունքներն իրացնելու, պաշտպանելու և հարգելու նպատակով:

Տեքստում գործածած հիմնական հասկացություններ՝

- «Երեխա»՝ 18 տարին չլրացած ցանկացած անձ:
- «Թվային միջավայր»՝ նորարարական, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՆՏՀՏ), այդ թվում՝ համացանց, բջջային և նմանատիպ տեխնոլոգիաներ և սարքեր, ինչպես նաև թվային ցանցեր, տվյալների շտեմարաններ, բովանդակություն և ծառայություններ:

2. Հիմնարար սկզբունքները և իրավունքները

Ստորև ներկայացված սկզբունքներն ու իրավունքները պետք է ընկալվեն այնպես, ինչպես կիրառվել են սույն ուղեցույցի բոլոր բաժիններում:

2.1. Երեխայի լավագույն շահերը

1. Թվային միջավայրում երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահերը պետք է լինեն առաջնահերթ: Երեխայի լավագույն շահերը գնահատելիս պետությունները պետք է ամեն ջանք գործադրեն երեխայի պաշտպանության իրավունքը հավասարեցնելու կամ համապատասխանեցնելու այլ իրավունքների հետ, մասնավորապես՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության, ինչպես նաև՝ մասնակցության իրավունքի հետ:

2.2. Երեխայի զարգացող կարողությունները

2. Երեխայի կարողությունները զարգանում են աստիճանաբար՝ ծնունդից մինչև 18 տարեկան: Անհատապես երեխաները տարբեր տարիքում հասնում են հասունության տարբեր մակարդակների: Պետությունները և այլ շահագրգիռ կողմերը պետք է հաշվի առնեն երեխաների՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող կամ խոցելի իրավիճակում հայտնվածների, զարգացող կարողությունները և ապահովեն, որպեսզի քաղաքականությունն ու գործելակերպը ընդունվեն՝ հաշվի առնելով թվային միջավայրում նրանց համապատասխան պահանջները: Սա նշանակում է, օրինակ, որ երիտասարդության իրավունքների իրացման համար մշակված քաղաքականությունը կարող է զգալիորեն տարբերվել ավելի փոքր տարիքի երեխաների համար մշակված քաղաքականությունից:

2.3. Խտրականության չենթարկվելու իրավունք

3. Երեխայի իրավունքները կիրառվում են բոլոր երեխաների նկատմամբ՝ առանց խտրականության, անկախ երեխայի տարիքից, երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ կողմնորոշումից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքի, հաշմանդամության առկայությունից, ծնունդից[1] կամ այլ կարգավիճակից:

4. Թեպետ միջոցներ պետք է ձեռնարկվեն թվային միջավայրում յուրաքանչյուր երեխայի իրավունքներն իրացնելու, պաշտպանելու և հարգելու նպատակով, այդուհանդերձ կարող են անհրաժեշտ լինել նաև նպատակաուղղված

1 Երեխաների իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, հոդ. 2.1

միջոցառումներ խոցելի իրավիճակներում հայտնված երեխաների համար՝ հաշվի առնելով, որ թվային միջավայրը վնասակար ազդեցություն կարող է ունենալ նրանց վրա՝ ինչպես երեխաների խոցելիության բարձրացման, այնպես էլ՝ նրանց հնարավորություններ ընձեռելու, պաշտպանելու և աջակցելու հարցում:

2.4. Լսելի լինելու իրավունք

5. Երեխաներն իրավունք ունեն ազատորեն արտահայտվել իրենց վերաբերվող բոլոր հարցերի շուրջ, և նրանց տեսակետները պետք է հաշվի առնվեն՝ ըստ տարիքի և հասունության:

6. Պետությունները և համապատասխան շահագրգիռ այլ կողմերը պետք է տեղեկատվություն տրամադրեն երեխաներին՝ նրանց իրավունքների, այդ թվում՝ նրանց մասնակցության իրավունքի մասին՝ երեխաների համար հասկանալի ձևով, ըստ նրանց տարիքի և հանգամանքների: ՏՀՏ-ներով ինքնարտահայտելու նրանց հնարավորությունները պետք է ընդլայնվեն՝ ի լրումն դեմառդեմ մասնակցության: Երեխաները պետք է տեղեկացված լինեն համապատասխան աջակցություն ցուցաբերող մեխանիզմների և ծառայությունների, ինչպես նաև իրավունքների չարաշահման դեպքում բողոքների, օգնության կամ փոխհատուցման մասին: Նման տեղեկատվությունը պետք է մատչելի լինի նաև նրանց ծնողների կամ խնամակալների համար, որպեսզի նրանք ևս աջակցեն երեխաներին իրավունքների իրացման հարցում:

7. Ավելին, պետությունները և համապատասխան շահագրգիռ այլ կողմերը պետք է ակտիվորեն ներգրավեն երեխաներին՝ մասնակցելու թվային միջավայրում երեխայի իրավունքներ հարգելու, պաշտպանելու և իրականացնելու նպատակով օրենսդրության, քաղաքականության, մեխանիզմների, փորձի, տեխնոլոգիաների և ներուժի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին:

2.5. Շահագրգիռ այլ կողմերի ներգրավելու պարտավորվածությունը

8. Ըստ համապատասխան միջազգային չափանիշների՝ պետություններն ունեն առաջնային պարտավորություն՝ իրացնել, պաշտպանել և հարգել յուրաքանչյուր երեխայի իրավունքներն իրենց իրավասության շրջանակներում և պետք է ներգրավեն համապատասխան շահագրգիռ բոլոր կողմերին, մասնավորապես, կրթության և երեխաների պաշտպանության ու խնամքի համակարգերի, պետական հաստատությունների ներկայացուցիչներին, և բիզնես կառույցներին, քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին, ինչպես նաև հենց երեխաներին և նրանց ծնողներին, օրինական խնամակալին կամ երեխային խնամող ցանկացած այլ անձի՝ այս պարտավորություններն արդյունավետ իրականացնելու նպատակով:

9. Յուրաքանչյուր պետություն թվային միջավայրի հետ կապված պետք է այնպիսի միջոցներ կիրառի, որոնք անհրաժեշտ են, որպեսզի բիզնես կառույցներն իրացնեն երեխայի իրավունքը, հարգեն իրենց պարտավորությունները պետության իրավական համակարգի շրջանակում իրականացվող բոլոր գործողություններում և, անհրաժեշտության դեպքում, արտերկրում կատարվող բոլոր գործողություններում տվյալ երկրի իրավական համակարգի շրջանակում: Բացի այդ, պետությունները պետք է խրախուսեն և աջակցեն բիզնես կառույցներին համապատասխան այլ միջոցներով՝ երեխայի իրավունքներն ըմբռնելու և հարգելու գործում:

3. Թվային միջավայրում երեխաների իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու գործող սկզբունքները և միջոցները

3.1. Թվային միջավայրի մատչելիություն

10. Թվային միջավայրի մատչելիությունը և գործածումը կարևոր է ոչ միայն երեխաների իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման համար, այլ նաև նրանց ներգրավման, կրթության, մասնակցության և ընտանեկան ու սոցիալական հարաբերությունների պահպանման համար: Երբ երեխաներին հասանելի չէ թվային միջավայրը, կամ եթե այդ հասանելիությունը սահմանափակ է թույլ կապի պատճառով, ապա դա կարող է ազդել մարդու իրավունքների լիարժեք իրացման վրա:

11. Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որ բոլոր երեխաներն ունենան իրենց համար նախատեսված համապատասխան, մատչելի և անվտանգ հասանելիություն սարքերին, կապին, ծառայություններին և բովանդակությանը: Պետությունները պետք է հնարավորինս առավել միջոցներ ձեռնարկեն հատուկ հանրային տարածքներում թվային միջավայրի հասանելիությունն անվճար դարձնելու համար:

12. Պետությունները պետք է ապահովեն թվային միջավայրի մատչելիությունը երեխաների համար նախատեսված կրթական և խնամքի այլ հաստատություններում: Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն խոցելի իրավիճակներում հայտնված երեխաների համար, մասնավորապես, այլընտրանքային խնամքի կարիք ունեցող, ազատությունից զրկված երեխաների, կամ ազատությունից զրկված ծնողների երեխաների, միջազգային միգրացիայի կոնտեքստում, փողոցում հայտնված և գյուղական համայնքներում բնակվող երեխաների համար: Պետությունները պետք է պահանջեն առցանց ծառայություն մատուցողներից՝ ապահովել, որպեսզի իրենց կողմից մատուցվող ծառայությունները հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող երեխաներին:

13. Սարքերի, ծառայությունների և բովանդակության կապը և հասանելիությունը պետք է ուղեկցվի կրթական և ուսուցողական համապատասխան միջոցառումներով՝ ներառելով գենդերային կարծրատիպեր կամ սոցիալական նորմեր, որոնք կարող են սահմանափակել երեխաների համար տեխնոլոգիաների հասանելիությունը և գործածումը:

14. Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի համացանցին միացող, առցանց ծառայություններ կամ բովանդակություն տրամադրող սարքերի օգտագործման պայմանները լինեն հասանելի, արդար, թափանցիկ, հասկանալի, անհրաժեշտության դեպքում ձևակերպված լինեն հստակ՝ երեխային մատչելի և տարիքին համապատասխան լեզվով:

15. Պետությունները պետք է ապահովեն բարձրորակ տեղեկատվության, երեխաների համար կրթական թվային բովանդակության և ծառայությունների աղբյուրների բազմազանությունը: Երեխաների իրավունքները պետք է հաշվի առնվեն պետական գնումների համապատասխան ընթացակարգերում, օրինակ, կրթական գործիքներ ձեռք բերելու համար թվային ծառայությունների հասանելիությունն ու գործածումը և դրանց բովանդակությունը չպետք է սահմանափակել առևտրային շահերով կամ կրճատումներով:

3.2. Կարծիքն ազատորեն արտահայտելու և տեղեկատվության ազատության իրավունք

16. Թվային միջավայրը զգալիորեն աջակցում է երեխաների կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի իրականացմանը, ինչպես նաև՝ փնտրելու, ստանալու և տարածելու ցանկացած տեղեկատվություն և գաղափարներ: Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն երաշխավորելու երեխայի իրավունքները՝ այն է՝ ունենալ և արտահայտել ցանկացած տեսակետ, կարծիք կամ արտահայտություն՝ իրենց համար կարևոր հարցերի վերաբերյալ, իրենց նախընտրած լրատվամիջոցով՝ անկախ այն բանից, թե նրանց կարծիքներն ու տեսակետները պետության կամ շահագրգիռ այլ կողմերի համար ցանկալի են, թե ոչ:

17. Երեխաները, որպես թվային միջավայրում տեղեկատվության հեղինակներ և տարածողներ, պետք է իրազեկվեն պետությունների կողմից, հատկապես կրթական ծրագրերի միջոցով, թե տեղեկատվական տեխնոլոգիաների միջավայրում ինչպես իրացնել արտահայտման ազատության իրենց իրավունքը, միաժամանակ հարգելով մյուսների, այդ թվում՝ երեխաների իրավունքները և արժանապատվությունը: Այդպիսի ծրագրերը պետք է անդրադառնան մասնավորապես այնպիսի տեսակետների, ինչպիսիք են՝ արտահայտվելու ազատությունը և դրան առնչվող օրինական սահմանափակումները, օրինակ՝ մտավոր սեփականության իրավունքը հարգելը կամ ատելության և բռնության հրահրման տարածումը արգելելը:

18. Պետությունները պետք է նախաձեռնեն և խրախուսեն բազմազան բարձրորակ առցանց բովանդակության և սոցիալական ու մշակութային նյութերի տրամադրումը երեխաներին՝ նպաստելով նրանց լիարժեք զարգացմանն ու հասարակության կյանքին նրանց մասնակցությանը: Սա պետք է ներառի հնարավորինս մեծ քանակությամբ բարձրորակ տեղեկատվություն, որը հատուկ նախատեսված է երեխաների համար, հեշտ է գտնել և հասկանալ, տրամադրված է նրանց մատչելի լեզվով և հարմարեցված է նրանց տարիքին և մտածելակերպին: Այս համատեքստում հատկապես կարևոր է երեխայի իրավունքների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվությունը՝ վերջին նորությունների, առողջության և սեռական դաստիարակության վերաբերյալ: Պետությունները պետք է ապահովեն երեխաների՝ իրենց համար օգտակար բարձրորակ տեղեկատվություն ստանալու, այն ուսումնասիրելու և տեղաբաշխելու գործընթացները:

19. Եթե տեղեկատվությունը լրատվամիջոցներին տրամադրվում է պետության կողմից, ապա պետք է ապահովի երեխաների ակտիվ մասնակցությունը՝ խրախուսելով նրանց կողմից ստեղծված բովանդակության տրամադրումը և ապահովել նրանց մասնակցության այլ ձևեր: Պետք է նաև ուշադրություն դարձնել երեխաների համար առցանց լրատվամիջոցների հասանելիությանը, ինչպես նաև երեխաների ներգրավվածությանը և ներկայացվածությանը:

20. Թվային միջավայրում երեխաների կարծիքի ազատորեն արտահայտման և տեղեկատվության ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի մարդու իրավունքների միջազգային և եվրոպական կոնվենցիաներին և ստանդարտներին: Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երեխաները իրազեկվեն համապատասխան այնպիսի սահմանափակումների մասին, ինչպիսիք են՝ բովանդակության կրճատումը/զտումը, որն արվում է ըստ նրանց զարգացող հնարավորությունների, ինչպես նաև տրամադրեն համապատասխան միջոցների վերաբերյալ ուղղորդումներ, այդ թվում՝ բողոքների, չարաշահումների դեպքերում կամ տրամադրեն օգնություն և խորհրդատվություն՝ խնդիրներ առաջանալու դեպքում: Անհրաժեշտության դեպքում ծնողները կամ խնամակալները նույնպես պետք է տեղեկացվեն նման սահմանափակումների և համապատասխան միջոցների մասին:

3.3. Մասնակցություն, խաղի մեջ ներգրավվելու, խաղաղ հավաքների և միավորումների իրավունք

21. Թվային տեխնոլոգիաների միջավայրը տարբեր հնարավորություններ է տալիս երեխային իրացնելու իր՝ մասնակցելու իրավունքը, խաղի մեջ ներգրավվելու և խաղաղ հավաքների և միավորումների իրավունքը, այդ թվում՝ նաև առցանց հաղորդակցման, խաղային, ցանցային և ժամանցային միջոցներով: Պետությունները պետք է համագործակցեն այլ շահագրգիռ կողմերի հետ՝ այսպիսի գործողությունները երեխաների համար մատչելի դարձնելու համար. դրանք կարող են նպաստել երեխաների՝ ինչպես առցանց, այնպես էլ անցանց տարբերակներով մասնակցությանը, ներգրավմանը, թվային միջավայրի լիիրավ անդամի ձևավորմանը:

22. Հարգելով երեխաների իրավունքները՝ նրանց տարիքին և զարգացմանը համապատասխան ներգրավվածությունը խաղերում և վերականգնողական գործողություններում, պետությունները պետք է ապահովեն մի շարք պայմաններ, ներդրումային հնարավորություններ, ստանդարտներ և տեխնիկական ուղեցույցներ թվային տեխնոլոգիաների բովանդակության և սոցիալական, քաղաքացիական, գեղարվեստական, մշակութային, կրթական և առողջական ծրագրերի համար նպաստավոր ծառայությունների ստեղծման և տարածման համար: Սա ներառում է ինտերակտիվ և խաղարկային գործիքներ, որոնք նպաստում են այնպիսի հմտությունների ձեռքբերմանը, ինչպիսիք են՝ ստեղծագործական, թիմային աշխատանքները և խնդիրների լուծումը՝ ըստ նրանց զարգացող հնարավորությունների՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի իրավիճակներում հայտնված երեխաների կարիքներին: Եթե երեխաները մասնակցում են այս գործիքների ստեղծմանը, ապա պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ երեխայի մտավոր սեփականության իրավունքը պաշտպանելու համար:

23. Պետությունները պետք է երեխաներին տրամադրեն նրանց տարիքին և հասունությանը համապատասխան տեղեկատվություն, ներառյալ՝ ոչ գրավոր ձևերով և սոցիալական ցանցերով կամ այլ լրատվամիջոցներով՝ նրանց իրավունքների մասին, մասնավորապես՝ մասնակցության իրավունքի մասին: Պետությունները պետք է նաև իրազեկեն նրանց հասանելի հնարավորությունների մասին, և որտեղ նրանք կարող են աջակցություն ստանալ այս հնարավորություններից օգտվելու համար:

24. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երեխաները կարողանան արդյունավետորեն մասնակցել տեղական, ազգային և համընդհանուր հանրային քաղաքականությանը, քաղաքական բանավեճերին և կարողանան աջակցել առցանց քաղաքացիական ու սոցիալական հարթակների ձևավորմանը՝ իրենց հավաքներին և միավորումներին մասնակցելու իրավունքից օգտվելու համար, ամրապնդելով ժողովրդավարական քաղաքացիության և քաղաքական իրազեկման իրենց կարողությունները: Պետությունները պետք է նաև ապահովեն, որ թվային միջավայրում երեխաների մասնակցությունն իրականացվի նպատակային ձևով, այն կառուցելով երեխաների մասնակցության առկա հաջող փորձի և գնահատման հասանելի գործիքների հիման վրա:

25. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երեխաների կողմից թվային միջավայրում խաղաղ հավաքների և համախմբվելու իրավունքը պաշտպանեն պետական մարմինների կողմից կամ մասնավոր հատվածի հետ համատեղ իրականացվող հսկողությունից և վերահսկողությունից: Այն դեպքերում, երբ նման միջոցները խոչընդոտում են երեխաների կողմից իրենց իրավունքների իրականացմանը, նրանք պետք է ենթարկվեն պաշտպանության չարաշահումների դեմ, համաձայն մարդու իրավունքների միջազգային և եվրոպական կոնվենցիաների

և ստանդարտների: Հատկանշական է, որ դրանք պետք է սահմանվեն օրենքով, որը պետք է լինի մատչելի, հստակ, պարզ և կանխատեսելի, ժողովրդավարական հասարակությունում հետապնդի օրինական շահ, թույլ տա կիրառել արդյունավետ միջոցներ:

3.4. Գաղտնիության և տվյալների պաշտպանություն

26. Երեխաներն ունեն անձնական և ընտանեկան կյանքի իրավունք թվային միջավայրում, որը ներառում է նրանց անձնական տվյալների պաշտպանությունը և հարգանքը նամակագրության և մասնավոր հաղորդակցության գաղտնիության նկատմամբ:

27. Պետությունները պետք է հարգեն, պաշտպանեն և իրացնեն երեխայի անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանության իրավունքը: Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի համապատասխան շահագրգիռ կողմերը, մասնավորապես, անձնական տվյալները մշակողները, ինչպես նաև երեխայի հասակակիցները, ծնողները կամ խնամակալները և մանկավարժներն իրազեկվեն և հարգեն երեխայի անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանության իրավունքը:

28. Պետությունները և այլ շահագրգիռ կողմերը պետք է երաշխավորեն, որ երեխաները տեղյակ են, թե ինչպես պետք է իրացնել անձնական կյանքի և տվյալների պաշտպանության իրենց իրավունքը՝ հաշվի առնելով տարիքը և հասունությունը ու, անհրաժեշտության դեպքում, իրենց ծնողների, խնամակալների, օրինական խնամակալների կամ այլ երեխայի համար պատասխանատվություն կրող անձանց ուղղորդմամբ՝ երեխայի զարգացող հնարավորությունների հետ համահունչ ձևով:

29. Ընդունելով, որ անձնական տվյալները կարող են մշակվել երեխաների օգտին, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երեխայի անձնական տվյալները մշակվեն արդար, օրինական, ճշգրիտ և ապահով, հատուկ նպատակներով և երեխաների ու (կամ) նրանց ծնողների, խնամակալների կամ օրինական ներկայացուցիչների, ազատ, հստակ, տեղեկացված և միանշանակ համաձայնությամբ, կամ օրենքով սահմանված այլ օրինական հիմքերով: Տվյալների նվազեցման սկզբունքը պետք է հարգվի, ինչը նշանակում է, որ անձնական տվյալների մշակումը պետք է լինի համարժեք, համապատասխան և ոչ չափազանցված՝ ըստ այն նպատակների, որոնց համար դրանք մշակվում են:

30. Պետությունները միջոցներ են ձեռնարկում որոշելու համար այն տարիքը, երբ երեխաները համարվում են համաձայնություն տվող անձինք՝ անձնական տվյալների, իրավունքների, տեսակետների, լավագույն շահերի և զարգացող կարողությունների մշակման համար: Սա պետք է վերահսկվի և գնահատվի, հաշվի առնելով տվյալների հավաքագրման մեթոդների և տեխնոլոգիական զարգացումների իրական ընկալումը երեխայի կողմից: Երբ երեխաներն այդ տարիքից ցածր են, և ծնողական համաձայնություն է պահանջվում, պետությունները պետք է պահանջեն, որպեսզի կիրառվեն ողջամիտ ջանքեր պարզելու համար, որ համաձայնությունը տրվում է երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից:

31. Պետությունները պետք է երաշխավորեն, որ տվյալների վերամշակման հնարավոր ազդեցությունը երեխայի իրավունքների վրա գնահատվում է, և տվյալների մշակումը նախատեսված է կանխարգելելով կամ նվազագույնի հասցնելով այդ իրավունքներին միջամտության ռիսկը:

32. Պետությունները պետք է ապահովեն հատուկ կատեգորիաների տվյալների վերամշակման գաղտնիությունը, որոնք համարվում են զգայուն: Այդպիսիք են՝

գենետիկական տվյալները, երեխային բնութագրող յուրօրինակ կենսաչափական տվյալները, քրեական դատապարտումների վերաբերյալ անձնական տվյալները և ռասայական կամ էթնիկ ծագման, քաղաքական կարծիքների, կրոնական կամ այլ հավատալիքները, մտավոր և ֆիզիկական առողջական կամ սեռական կյանքին վերաբերող տվյալները, որոնց վերամշակումը պետք է թույլատրվեն միայն այն դեպքերում, երբ համապատասխան երաշխիքներն ամրագրված են օրենքով:

33. Պետությունները պետք է երաշխավորեն, որ գաղտնիության գործիքների, կարգավորումների և փոխհատուցումների մասին տեղեկատվությունը մատչելի է երեխաներին՝ հասանելի, իմաստալից, երեխաների համար հեշտ ընկալելի և նրանց տարիքին համապատասխան: Երեխաները և/կամ նրանց ծնողները, խնամակալները կամ օրինական ներկայացուցիչները պետք է տեղեկացվեն տվյալները վերահսկողի կողմից, թե ինչպես են երեխաների անձնական տվյալները վերամշակվում: Սա պետք է պարունակի տեղեկություններ, օրինակ, տվյալների հավաքագրման, պահպանման, օգտագործման և բացահայտման, անձնական տվյալների հասանելիության, նրանց իրավունքի, տվյալների վերացման, ինչպես նաև նրանց իրավունքների իրացման մասին:

34. Պետությունները պետք է երաշխավորեն, որ երեխաները և / կամ նրանց ծնողները, խնամակալները կամ օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն հրաժարվելու անձնական տվյալների վերամշակման իրենց համաձայնությունից, ինչպես նաև կարող են օգտվել իրենց անձնական տվյալներից և դրանք ուղղել կամ ջնջել, մասնավորապես, երբ վերամշակումը անօրինական է կամ ազդում է իրենց արժանապատվության, անվտանգության կամ գաղտնիության վրա:

35. Ինչ վերաբերում է երեխաների անհատական տվյալներին, պետությունները պետք է իրականացնեն կամ պահանջեն համապատասխան շահագրգիռ կողմերից իրականացնել անձնական կյանքի անձեռնմխելիությանը և անձնական տվյալների գաղտնիությանն ուղղված միջոցառումներ՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Նման միջոցառումները պետք է ապահովեն սարքերում և ծառայություններում ներդրված գաղտնիության և տվյալների պաշտպանության իրավունքի ուժեղ երաշխիքներ:

36. Նկատի ունենալով կապ հաստատելու հնարավորություն ունեցող կամ սմարթ սարքավորումները, ներառյալ՝ խաղալիքների և հագուստի մեջ տեղադրվածները, պետությունները պետք է ձեռնարկեն հատուկ միջոցներ՝ ապահովելու տվյալների պաշտպանության սկզբունքները, կանոնները, ինչպես նաև հարգելու իրավունքները, հատկապես այն դեպքերում, երբ այդ արտադրանքը հիմնականում նախատեսված է երեխաների համար, կամ հավանական է, որ դրանք պարբերաբար օգտագործվում են նրանց կողմից կամ գտնվում են նրանց կողքին:

37. Երեխաների պրոֆիլավորումը, որը անձնական տվյալների ավտոմատացված մշակման ձև է և ներառում է երեխայի «պրոֆիլի» կիրառում, հատկապես երեխայի վերաբերյալ որոշումներ կայացնելու կամ նրա անձնական նախասիրությունները, վարքը և վերաբերմունքը վերլուծելու կամ կանխատեսելու նպատակով, պետք է արգելվի օրենքով: Բացառիկ հանգամանքներում պետությունները կարող են վերացնել այդ սահմանափակումը, եթե այն կա՛մ բխում է երեխայի շահերից կա՛մ եթե կա գերակա հանրային շահ կա՛մ առկա են օրենքով նախատեսված համապատասխան երաշխիքներ:

38. Թվային միջավայրում երեխաները չպետք է ենթարկվեն իրենց գաղտնիության իրավունքը խախտող կամայական կամ անօրինական միջամտության: Այն միջոցառումները, որոնք կարող են սահմանափակել երեխաների գաղտնիության իրավունքը, պետք է իրականացվեն օրենքի համաձայն, հետապնդեն օրինական

շահ, լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում և համարժեք լինեն հետապնդված օրինական շահին: Հսկողության կամ խափանման միջոցները, մասնավորապես, պետք է համապատասխանեն սույն պայմաններին և պետք է ենթարկվեն արդյունավետ, անկախ և անկողմնակալ վերահսկողության:

39. Պետությունները չպետք է օրենքով կամ գործնականում արգելեն անանունության, կեղծանունության կամ երեխաների համար գաղտնագրման տեխնոլոգիաների օգտագործումը:

3.5. Կրթության իրավունք

40. Պետությունները պետք է ակտիվորեն ներդրումներ կատարեն և աջակցեն թվային միջավայրի կողմից առաջարկվող հնարավորությունների միջոցով երեխաների կրթության իրավունքի իրացմանը: Կրթության նպատակը երեխայի անձի, տաղանդի, ինչպես նաև մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացումն է՝ առավելագույն ներուժի սահմաններում և երեխայի նախապատրաստումը ազատ հասարակության մեջ պատասխանատու կյանքին: Այս նպատակին սատարելու համար անհրաժեշտ է, որ թվային միջավայրի գիտելիքներն ու ներուժը լիարժեք հասանելի լինեն բոլոր երեխաներին՝ հաշվի առնելով երեխաների զարգացող կարողությունները, ինչպես նաև խոցելի վիճակում գտնվող երեխաների հատուկ կարիքները:

Թվային գրագիտություն

41. Պետությունները պետք է նպաստեն հասարակության՝ թվային գրագիտության, ներառյալ՝ լրատվամիջոցների և տեղեկատվական գրագիտության ու թվային կրթության զարգացմանը, որպեսզի երաշխավորեն, որ երեխաները ևս ունեն թվային միջավայրում խելացիորեն ներգրավվելու կարողություն և դրան առնչվող ռիսկերը հաղթահարելու ճկունություն: Թվային գրագիտությանն ուղղված կրթությունը պետք է ներառվի հիմնական կրթական ծրագրում ամենավաղ տարիքից՝ հաշվի առնելով երեխաների զարգացող կարողությունները:

42. Երեխայի իրավունքների լայն շրջանակի ապահովման համար թվային գրագիտության կրթությունը պետք է ներառի տեխնիկական կամ գործառնական ունակություններ՝ մի շարք ցանցային գործիքներ ու ռեսուրսներ օգտագործելու համար, ինչպես նաև բովանդակության ստեղծման ու թվային միջավայրի, դրա հնարավորությունների ու ռիսկերի ընկալմանն առնչվող քննադատական հմտություններ:

43. Թվային գրագիտությունը պետք է արդյունավետ կերպով խթանվի այն պայմաններում, որտեղ երեխաները օգտվում են համացանցից, հատկապես դպրոցներում, երեխաների հետ և նրանց համար աշխատող կազմակերպություններում: Պետությունները պետք է նաև աջակցեն ու նպաստեն ծնողների ու խնամակալների թվային գրագիտությանը պետության կողմից հաստատված ծնողներին հասանելի մեխանիզմների միջոցով՝ որպես երեխաների ու ընտանիքների համար առավել ապահով ու կայուն թվային տեխնոլոգիաների միջավայր ստեղծելու միջոց:

44. Հաշվի առնելով այն կրթական ծրագրերի հնարավոր առավելությունները, որոնք օգտագործում են թվային ցանցեր ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն իրականացնելու համար՝ ներառյալ տանը, պետությունները պետք է երաշխավորեն, որ սա անբարենպաստ չէ այն երեխաների համար, որոնք տանը հնարավորություններ չունեն կամ ապրում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում:

45. Պետությունների ու այլ շահագրգիռ մարմինների կողմից կրթության և մշակութային համակարգի միջոցով հատուկ ջանքեր պետք է գործադրվեն այն երեխաների թվային գրագիտությանն աջակցելու ու խթանելու համար, որոնք քիչ հասանելիություն ունեն կամ ընդհանրապես հասանելիություն չունեն թվային տեխնոլոգիաներին սոցիալ-աշխարհագրական կամ սոցիալ-տնտեսական պատճառներով, ինչպես նաև երբեմն բնակվելու վայրի պատճառով, նաև այն երեխաների համար, որոնք ունեն հասանելիություն, բայց չեն օգտագործում թվային տեխնոլոգիաներ, որոնք չունեն թվային տեխնոլոգիաներ օգտագործելու կամ գործածելու հմտություններ՝ խոցելիության պատճառով և հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

46. Պետությունները պետք է ջանքեր գործադրեն աղջիկների կողմից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և բոլոր երեխաների համար հնարավորությունների ու արդյունքների հավասարության խթանման համար:

Կրթական ծրագրեր և ռեսուրսներ

47. Պետությունները պետք է երաշխավորեն, որ համապատասխան բարձրորակ կրթական ռեսուրսները, ֆիզիկական սարքերը և սարքավորումները հասանելի են՝ երեխայի գործողությունները թվային միջավայրում խթանելու համար, և որոնք աջակցում են նրանց ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը: Սրանց մշակմանն ու տարածմանը կարող են մասնակցել նաև այլ շահագրգիռ կողմեր: Նման դրույթը պետք է գնահատել համաձայն ընթացիկ հաջող փորձի և անհրաժեշտ գործողությունների, որոնք իրականացվում են պետությունների և այլ շահագրգիռ մարմինների կողմից՝ պահպանելու թվային միջավայրի առկայությամբ պայմանավորված կրթության բարձր չափանիշները:

48. Պետությունները պետք է մշակեն և ամրապնդեն կրթությունը խթանող և իրազեկվածությունը բարձրացնող նախաձեռնություններ, ծրագրեր և օգտատիրոջ գործիքներ երեխաների, ծնողների կամ խնամակալների, ինչպես նաև երեխաների հետ աշխատող մանկավարժների և կամավորների համար, և այս ամենը երեխաների ներգրավվածությամբ: Նման ծրագրերը պետք է ներառեն կանխարգելման միջոցառումների, թվային միջավայրում իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքներ, չարաշահումների բացահայտում և հաղորդում, աջակցություն և հասանելի փոխհատուցումներ: Նման ծրագրերը մասնավորապես պետք է սովորեցնեն երեխաներին՝ ըստ նրանց տարիքի և զարգացող կարողությունների, թե ինչ է նշանակում համաձայնություն տալ, հարգել ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների հիմնարար իրավունքները, անհրաժեշտության դեպքում փոխհատուցման միջոցներ փնտրել և օգտագործել հասանելի գործիքներ թվային միջավայրում իրենց իրավունքների պաշտպանության և իրացման համար: Բացի այդ, նրանք պետք է հնարավորություն տան երեխաներին հասկանալու, որ կարող են գործ ունենալ վտանգավոր բովանդակության հետ (ինչպես օրինակ՝ բռնություն և ինքնավնասում, չափահասների պոռնոգրաֆիա, երեխայի սեռական չարաշահման նյութեր, խտրականություն և ռասիզմ, ատելության հրահրում), ինչպես նաև վտանգավոր վարքագծի հետ (ինչպես օրինակ՝ սեռական նպատակներով երեխաներին միջնորդելը կամ որոշակի աշխատանքներին նախապատրաստելը, ուրիշներին ահաբեկելը, հալածանքը, անձնական տվյալների անօրինական մշակումը, մտավոր սեփականության իրավունքների խախտումը) և, թե ինչպիսին կարող են լինել հնարավոր հետևանքները , երբ երեխաների մասին կամ երեխաների կողմից տարածում գտած տեղեկությունները տարածվեն տարբեր շրջանակներում և տարբեր մարդկանց կողմից:

49. Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական և մշակութային հաստատությունները (ներառյալ արխիվները, գրադարանները, թանգարանները, երեխաների և երիտասարդների կողմից ղեկավարվող կազմակերպությունները և այլ ուսումնական հաստատությունները) պետք է աջակցություն և օգնություն ստանան, որպեսզի զարգացնեն և հասանելի դարձնեն թվային և ինտերակտիվ ուսումնական հնարավորությունների բազմազանությունը և համագործակցեն ուսումնական շրջանակներում՝ արդյունավետ դարձնելու համար թվային միջավայրին առնչվող ուսումնական հնարավորությունները:

3.6. Պաշտպանության և անվտանգության իրավունքը

50. Հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների զարգացումը՝ երեխաները իրավունք ունեն թվային միջավայրում պաշտպանված լինել բոլոր տեսակի բռնություններից, շահագործումներից և վիրավորանքներից: Պաշտպանական ցանկացած միջոցառում պետք է նկատի ունենա երեխայի լավագույն շահերը և զարգացման կարողությունները և չպետք է չափից դուրս սահմանափակի այլ իրավունքների իրագործումը:

51. Երեխաների առողջ զարգացման և բարեկեցության համար մի շարք մտահոգություններ կան, որոնք կարող են առաջանալ թվային միջավայրում՝ ներառելով, բայց ոչ սահմանափակելով վնասի ռիսկերը.

- Սեռական շահագործում և չարաշահում, սեռական նպատակներով միջնորդություն (գրումինգ), երեխաների առցանց հավաքագրում՝ քրեական հանցանքների կատարման նպատակով, ծայրահեղ քաղաքական կամ կրոնական շարժումների մասնակցության կամ բռնության՝ թրաֆիքինգի ենթարկվելու համար(շփման ռիսկեր):
- Հատկապես կանանց և երեխաների ստորացուցիչ և կարծրատիպային նկարագիրը, բռնության և ինքնավնասման նկարագիրն ու գովաբանումը, հատկապես ինքնասպանությունները, ստորացուցիչ, խտրական ռասիստական արտահայտությունները կամ արդարացումները այսպիսի վարքի համար, մեծահասակների համար նյութեր (բովանդակության ռիսկեր):
- Հալածանք, հետամտում և ոտնձգությունների այլ տեսակներ, սեռական բնույթի պատկերների չհամաձայնեցված տարածում, շորթում, ատելության հրահրում, համակարգչային համակարգի մեջ ներխուժում, խաղամոլություն, ապօրինի ներբեռնում, կամ մտավոր սեփականության իրավունքի այլ խախտումներ, առևտրային շահագործումներ (վարքագծի ռիսկեր):
- Չափից ավելի օգտագործումը, քնից զրկվելը և ֆիզիկական վնասը (առողջությանը սպառնացող վտանգներ):

Վերը նշված բոլոր գործոններն ունակ են զգալի վնաս հասցնելու երեխայի ֆիզիկական, հուզական և հոգեբանական առողջությանը:

Թվային տեխնոլոգիաների միջավայրում ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ

52. Պետությունները, հաշվի առնելով նորարարական տեխնոլոգիաների զարգացման արագությունը, պետք է կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկեն՝ ներառյալ երեխաների առողջությանը սպառնացող վտանգների կանոնավոր գնահատումը՝ հաշվի առնելով նման ռիսկերի գոյության կամ ծավալի գիտական և տեխնիկական հիմնավորումները:

53. Պետությունները պետք է նպաստեն և խրախուսեն բիզնես կառույցների կողմից անձնական տվյալների ապահովությանը, անձնական տվյալների գաղտնիության պահպանմանը՝ որպես առաջնահերթ սկզբունք՝ երեխաների համար նախատեսված

և նրանց կողմից օգտագործվող արտադրանքի և ծառայությունների բնութագրերում և գործառույթներում:

54. Եթե պետությունները խրախուսում են բիզնես կառույցների կողմից ծնողական վերահսկողության զարգացումը, արտադրությունը և պարբերական թարմացումը թվային միջավայրում երեխաներին սպառնացող ռիսկերի մեղմացման համար, նրանք պետք է երաշխավորեն, որ այսպիսի վերահսկողությունը ստեղծվում և կիրառվում է՝ հաշվի առնելով երեխաների զարգացման կարողությունները, և որ նրանք չեն կիրառում խտրական վերաբերմունք, չեն սահմանափակում երեխաների անձնական տվյալների գաղտնիության իրավունքը կամ չեն զրկում երեխաներին տեղեկատվություն ստանալու իրավունքից՝ նրանց տարիքի և հասունության պատճառով:

Պաշտպանության և իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ

55. Պետությունները պարտավոր են մշակել հատուկ քաղաքականություն և միջոցառումներ՝ մանկահասակ երեխաներին թվային միջավայրում վաղաժամ ներգրավվածությունից պաշտպանելու համար՝ հաշվի առնելով վերջինիս սահմանափակ դրական ազդեցությունը երեխաների ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և զարգացման կարիքների վրա:

56. Պետությունները պետք է պահանջեն ներդնել տարիքի ստուգման արդյունավետ համակարգեր՝ երաշխավորելով, որ երեխաները պաշտպանված են թվային միջավայրի այն արտադրանքներից, ծառայություններից և նյութերից, որոնք օրինապես արգելված են որոշակի տարիքի համար, ինչպես նաև պետք է պահանջեն կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք հանգեցնում են տեղեկատվության նվազեցմանը:

57. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն թվային միջավայրում պաշտպանելու երեխաներին առևտրային շահագործումներից՝ ներառյալ արգելելով երեխաների տարիքին անհամապատասխան գովազդի ցուցադրումը և մարքեթինգային գործունեությունը: Պետությունները պետք է երաշխավորեն նաև, որ երեխաները չեն ներգրավվի առևտրային անազնիվ գործարքների մեջ և կպահանջեն բիզնես կառույցներից և շահագրգիռ այլ կողմերից թվային միջավայրում վարել ապրանքների գովազդային հստակ և անվտանգ քաղաքականություն՝ սահմանափակելով երեխաների անձնական տեղեկատվության տարածումը առևտրային նպատակներով:

58. Պետությունները խրախուսում են զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությունը՝ հարգելով նրանց ազատությունը, ուսումնական հաստատությունների և շահագրգիռ այլ կողմերի հետ՝ իրականացնելով իրազեկվածությանն ուղղված ծրագրեր ՝ նպատակ ունենալով պաշտպանել երեխաներին վնասակար բովանդակությունից, ինչպես նաև կանխարգելել նրանց ներգրավվածությունը անօրինական առցանց գործունեության մեջ:

59. Պետությունները պետք է խրախուսեն բիզնես կառույցներին և շահագրգիռ այլ կողմերին մշակել և իրականացնել այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է թվային միջավայրում կիբեռհարձակումների, ոտնձգությունների և ատելության ու բռնության հրահրման դեմ: Այդ քաղաքականությունը պետք է ներառի նաև անընդունելի վարքագծի, դեպքերի հաղորդման մեխանիզմների, ինչպես նաև վերոնշյալ գործողություններում ներգրավված երեխաներին նպատակային աջակցություն ցուցաբերելու մասին հստակ տեղեկություններ:

60. Պետությունները պետք է տարածեն իրենց հաջող փորձը՝ թվային միջավայրում ռիսկերի նվազեցման ձևերի մասին, որոնք վերաբերվում են կանխարգելմանը և ցուցաբերած աջակցությանը: Պետությունները պետք է պարբերաբար հրապարակեն տեղեկատվություն՝ հանրային իրազեկման միջոցառումների, խորհրդատվության, հաղորդման և բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ:

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն պարունակող նյութերի դեմ ուղղված քայլերը

61. Երեխաների նկատմամբ սեռական բռնության նյութերի դեմ ուղղված քաղաքականությունը պետք է կենտրոնանա այն դեպքերի վրա, երբ զոհը երեխաներն են՝ կարևորելով դրանց հայտնաբերումը, տուժածի պաշտպանությունը, ինչպես նաև վերջիններիս վերականգնողական ծառայությունների մատուցումը:

62. Պետությունները պետք է շարունակաբար հետևեն, թե արդյոք երեխաների սեռական շահագործման նյութերն գտնվում են իրենց իրավասության տիրույթում և պարտադրեն իրավապահ մարմիններին ստեղծել «հեշերի[2]» շտեմարաններ՝ արագացնելով սեռական բռնություն պարունակող նյութերում հայտնված երեխաների հայտնաբերումը և նրանց պաշտպանությանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը:

63. Պետությունները պետք է համագործակցեն գործարար միջավայրի հետ՝ տրամադրելով աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև տեխնիկական աջակցություն և սարքավորումներ, ինչպես նաև համագործակցեն իրավապահ մարմինների հետ՝ երեխաների դեմ բռնություն կատարած հանցագործների բացահայտման և, քրեական վարույթների համար անհրաժեշտ ապացույցներ հավաքագրելու նպատակով:

64. Հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների հասանելիությունը և պատասխանատվության սկզբունքների նկատմամբ չունենալով կանխակալ վերաբերմունք, ինչպես նաև այն փաստը, որ համացանցային միջնորդներն ազատված են ընդհանուր մոնիթորինգի ենթարկվելու պարտավորությունից, պետությունները պետք է պահանջեն գործարար միջավայրից կիրառել խելամիտ և արդյունավետ միջոցներ՝ հավաստիանալու համար, որ նրանց ցանցերը կամ առցանց ծառայությունները չեն օգտագործվում հանցավոր կամ անօրինական, ինչպես նաև երեխաներին վնասելու, նրանց նկատմամբ սեռական բռնություն պարունակող նյութերի ստեղծման, տարածման և երեխաներին առցանց եղանակով շահագործման նպատակներով:

65. Պետությունները գործարար միջավայրից պետք է պահանջեն երաշխիքներ այն մասին, որ իրենց ցանցերը չեն օգտագործվում երեխաների նկատմամբ սեռական բռնություն պարունակող նյութերի տեղադրման և տարածման նպատակով:

66. Պետությունները պետք է պահանջեն գործարար միջավայրից կիրառել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի լոկալ ցանցերում հայտնաբերված երեխաների նկատմամբ սեռական բռնություն պարունակող նյութերի վերաբերյալ մետատվյալների առկայությունը ապահովվի, դրանք տրամադրվեն իրավապահ մարմիններին,հեռացնեն այդ նյութերը, իրենց իրավասության շրջանակներից դուրս

2 Հեշեր՝ յուրահատուկ թվային մատնահետք, կցված թվային ֆայլերին, այդ թվում՝ երեխաների սեռական շահագործման նյութեր պարունակող ֆայլերին: Հեշերը թույլ են տալիս արագ վերլուծել տվյալների մեծ քանակություն, հնարավորություն ընձեռելով խուսափել երեխաների սեռական շահագործման նյութեր պարունակող պատկերների անհատական ուսումնասիրությունից: Հեշերը չեն ներկայացնում հենց պատկերները և չեն կարող հետ-նախագծվել՝ երեխաների սեռական չարաշահման պատկերներ ստանալու նպատակով:

գտնվող սերվերների վրա հայտնաբերված նմանատիպ նյութերի հայտնաբերման դեպքում սահմանափակեն այդ նյութերի նկատմամբ հասանելիությունը:

3.7. Իրավական պաշտպանության միջոցները

67. Անդամ-պետությունները պետք է ապահովեն իրենց պարտավորությունների արդյունավետ կատարումը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների (ETS No. 5) և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և եվրոպական փաստաթղթերի, երբ երեխան պետք է իրացնի իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու իր իրավունքը՝ թվային միջավայրում երեխաների իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման դեպքում:, : Սա ենթադրում է երեխայի համար նպաստավոր, մատչելի, ակնհայտ և հասանելի միջոցառումներ, որոնց միջոցով երեխաները, ինչպես նաև նրանց ծնողներն ու օրինական ներկայացուցիչները կարող են ներկայացնել իրենց բողոքները և ստանալ աջակցություն: Արդյունավետ աջակցություն է համարվում, կախված չարաշահման տեսակից, հարցը, հարցաքննությունը, բացատրությունը, պատասխանը, ուղղումը, վարույթները, անօրինական բովանդակության անհապաղ հեռացումը, ներողությունը և փոխհատուցումը:

68. Ներպետական մակարդակում երեխաները իրավական պաշտպանության մասին պետք է տեղեկատվություն ստանան, որը հարմարեցված կլինի նրանց տարիքին և հասունությանը,հասկանալի լեզվով, ապահովելով գենդերային և մշակութային զգայունությունը: Մեխանիզմները և գործընթացները պետք է ապահովեն, որպեսզի տրամադրվող աջակցությունը լինի արագ և բարենպաստ երեխայի համար, ինչպես նաև պատշաճ փոխհատուցում տրամադրվի երեխաներին:

69. Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր դեպքերում դատարանները, վարչական աջակցությունների դատական քննությունները և այլ գործընթացները համապատասխանեն առկա այն սկզբունքներին, որոնք նշված են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի երեխայակենտրոն արդարադատության ուղեցույցներում (2010):

70. Պետությունները պետք է անհրաժեշտության դեպքում երեխաներին, նրանց ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին տրամադրեն նաև ոչ-դատական մեխանիզմներ, վարչական կամ այլ միջոցներ՝ աջակցություն ստանալու համար: Այդպիսիք կարող են լինել, օրինակ՝ երեխաների իրավունքների պաշտպանները (երեխաների օմբուդսմենները), մարդու իրավունքների պաշտպանության ազգային այլ ինստիտուտները և տվյալների պաշտպանության մարմինները: Թվային միջավայրում երեխաների իրավունքների խախտման դեպքերին առնչվող մեխանիզմների հասանելիությունը, ճշգրտությունը և արդյունավետությունը պետք է կանոնավոր կերպով վերահսկվի:

71. Պետությունները, որպես առաջնային պատասխանատվություն կրող մարմիններ, պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ երեխաներին՝ թվային միջավայրում բիզնես կառույցների կողմից մարդու իրավունքների չարաշահումներից պաշտպանելու համար, ինչպես նաև վստահ լինեն, որ երեխաները ստանում են արդյունավետ աջակցություն: Այդ միջոցառումներն են.

ա. քաղաքականության միջոցներով խրախուսել բիզնես կառույցներին, որ նրանք ստեղծեն իրենց սեփական աջակցման կամ բողոքարկման մեխանիզմները՝ հիմք ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության Ձեռնարկատիրության և մարդու իրավունքների սկզբունքների վերաբերյալ ուղեցույցները, միաժամանակ ապահովելով, որ այդ մեխանիզմները չեն խոչընդոտի երեխայի համար պետական դատական և ոչ դատական մեխանիզմների հասանելիությունը,

բ. խրախուսել բիզնես կառույցներին, որ նրանք երեխաներին տրամադրեն տեղեկություններ, որոնք հասանելի և հասկանալի են նրանց, համապատասխանում են տարիքին և պարզաբանում են, թե ինչպես երեխաները կարող են ներկայացնել բողոքներ և հայցել իրավական աջակցություն,

գ. պահանջել, որպեսզի բիզնես կառույցները իրենց հարթակներում կամ իրենց կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում յուրաքանչյուր մարդու և հատկապես երեխաների համար ստեղծեն մատչելի միջոցներ, որով նրանք կարող են բողոքել ցանկացած տեղադրված նյութի և գործողության դեմ, որը հարուցում է նրանց մտահոգությունը, իսկ ստացված բողոքները քննարկել արդյունավետ և ողջամիտ ժամկետներում:

4. Ազգային համակարգ

4.1.Իրավական համակարգ

72. Թվային միջավայրին վերաբերող օրենքներն ու քաղաքականությունները պետք է գնահատվեն նրանց նախագծման փուլում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք կարող են ունենալ լուրջ ազդեցություն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա: Պետությունները պետք է, անհրաժեշտության դեպքում, պարբերաբար, վերանայեն իրավական շրջանակները՝ թվային միջավայրում երեխայի իրավունքների լիարժեք իրացման նպատակով:

73. Համապարփակ իրավական համակարգը պետք է նախատեսի թվային միջավայրի կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցներ, ձեռնարկի իրավական աջակցությանն ուղղված միջոցառումներ՝ ծնողների և խնամակալների համար, արգելի բռնության, շահագործման և չարաշահման բոլոր դեպքերը, տրամադրի արդյունավետ փոխհատուցման, վերականգնման և վերաինտեգրման ծառայություններ, երեխային և նրա տարիքին ու սեռին համապատասխան խորհրդատվություն, մշակի հաշվետվության և բողոքարկման մեխանիզմներ, ստեղծի երեխայի համար բարենպաստ պայմաններ՝խորհրդատվություն ստանալու և մասնակցության համար, ինչպես նաև անպատժելիության դեմ պայքարին ուղղված պատասխանատվության մեխանիզմներ:

74. Պետությունները պետք է երաշխավորեն, որ իրենց իրավական համակարգերը ներառում են թվային միջավայրում անօրինական գործողությունների դեմ պայքարի ամբողջական շարքը, հնարավորության դեպքում ձևակերպված են տեխնոլոգիապես չեզոք ձևով՝ տեղ թողնելով նոր տեխնոլոգիաների առաջացման համար: Իրավական համակարգերը պետք է ներառեն հանցագործությունների, քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության և պատժամիջոցների սահմանումները ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ինչպես նաև երեխաների համար ծառայությունների մատուցման պայմանները: Պատշաճ կերպով պետք է հաշվի առնել այն համապատասխան գործիքները, որոնք են՝ Եվրոպայի խորհրդի սեռական շահագործման և սեռական չարաշահումների դեմ երեխաների պաշտպանության մասին կոնվենցիան (CETS No. 201), Կիբեռհանցագործության մասին կոնվենցիան (ETS No. 185) և Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունները՝ երեխաների վաճառքի, մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ (2000 թ.), Հաղորդակցության ընթացակարգը (2011թ.), որոնք կարող են ծառայել որպես քրեական իրավունքի բարեփոխումների չափանիշներ և իրավական շրջանակների ու ծառայությունների լայն բարեփոխումներ և կարող են մատնանշել արդյունավետ օրենսդրական դաշտի զարգացման գործընթացը:

75. Այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս հասակակիցների համացանցային բռնության կամ չարաշահումների դեպքեր, պետությունները պետք է հնարավորինս լայնորեն իրականացնեն համապատասխան կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումներ՝ կանխելով երեխաների արարքները քրեականացնելը:

76. Պետությունները պետք է ստեղծեն իրավական շրջանակներ, որոնք վերաբերում են երեխաների անձնական տվյալների մշակմանը և պարբերաբար գնահատեն նման շրջանակների ընդհանուր արդյունավետությունը: Պատշաճ կերպով պետք է հաշվի առնել համապատասխան միջազգային և եվրոպական փաստաթղթերը, որոնք վերաբերում են տվյալների պաշտպանության սկզբունքներին և իրավունքներին, օրինակ՝ Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան (ETS No. 108):

77. Իրավական շրջանակները պետք է ապահովեն, որ տվյալների պաշտպանության անկախ մարմինները իրազեկ են ստանալ երեխաների և/կամ նրանց ծնողների, խնամակալների կամ օրինական ներկայացուցիչների բողոքները, որոնք վերաբերում են երեխաների անհատական տվյալների անօրինական մշակմանը և ստեղծեն արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան երեխաներին ուղղել կամ ջնջել իրենց տվյալները, եթե դրանք վերամշակվել են ներքին օրենսդրության դրույթներին հակառակ կամ, եթե երեխաները հրաժարվում են իրենց համաձայնությունից: Հարցման դեպքում համապատասխան պետական և մասնավոր շահագրգիռ կողմերը պարտավոր են հեռացնել կամ ջնջել նման բովանդակությունն անվճար:

78. Պետությունները պետք է ստեղծեն հստակ և կանխատեսելի իրավական և կարգավորիչ միջավայր, որն օգնում է բիզնեսին և այլ շահագրգիռ կողմերին՝ իրենց գործունեության ընթացքում կատարել թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու իրենց պարտավորությունը:

79. Պետությունները պետք է երաշխավորեն, որ երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչները կարող են փոխհատուցում ստանալ մեղավորներից իրենց իրավունքների խախտման և չարաշահումների դիմաց: Անհրաժեշտության դեպքում կարելի է ստեղծել հիմնադրամներ՝ տուժած երեխաների օգնության համար կամ կիրառել միջոցներ, բուժական կամ այլ աջակցություն տրամադրելու ծրագրեր:

Պետության բարձրագույն մակարդակի տիրույթի (domain) գրանցման հատուկ պահանջներ

80. Պետության կողմից որևէ անձի պայմանագրի կամ արտոնագրի տրամադրումը՝ պետության ծածկագրով բարձրագույն տիրույթ գրանցելու համար, պետք է ներառի հստակ պահանջներ՝ հաշվի առնելով երեխաների լավագույն շահերը: Այս պահանջները պետք է ներառեն, մասնավորապես, հստակ արգելք՝ գրանցելու յուրաքանչյուր այնպիսի տիրույթի անվանում, որը գովազդում կամ առաջարկում է, որ երեխայի մասնակցությամբ սեռական չարաշահումները կարող են մատչելի լինել գրանցողի տիրույթում, ինչպես նաև այնպիսի մեխանիզմների ստեղծում գրանցողի կողմից, որոնք կվերահսկեն սույն պահանջների պահպանումը, այդ թվում՝ գրանցողի և գրանցվողի կողմից: Նույն պահանջները պետք է կիրառվեն նաև գերիշխող վերին մակարդակի տիրույթների գրանցման համար:

81. Այն դեպքերում, երբ գրանցվողն առաջարկում է ստեղծել կամ թարմացնել երեխաներին ուղղված կամ նրանց կողմից երկրի տիրույթում հաճախակի օգտագործվող կայք կամ ծառայություն, պետությունները պետք է ապահովեն, որպեսզի գրանցողը կամ այլ իրավասու մարմինը գրանցվողից պահանջի ներառել երեխայի պաշտպանությանն ուղղված համապատասխան քաղաքականություն:

Սա կարող է լինել, օրինակ, պահանջ այն մասին, որ գրանցողը կամ նրա աշխատակիցներից որևէ մեկը, որը մատուցում է ծառայություն կամ կառավարում է ծառայության կողմից ստեղծված տվյալները, մեղադրված չլինեն սեռական շահագործման կամ երեխաների նկատմամբ սեռական բռնության կամ այլ նմանատիպ հարցերում:

4.2. Քաղաքական և ինստիտուցիոնալ համակարգեր

Ընդհանուր ռազմավարության և քաղաքականության համակցումը

82. Երեխաների թվային տեխնոլոգիաների միջավայրում իրավունքների ամբողջական շարքի շրջանակներում ավելի լուրջ համագործակցության և քաղաքականության համակցման հասնելու նպատակով պետությունները պետք է ստեղծեն համապարփակ ազգային ռազմավարական մոտեցում և երաշխավորեն, որ քաղաքականությունն ու միջոցները հետևողական և փոխադարձ լրացնող են: Սա կարող է ներառել ռազմավարության կամ գործողությունների ծրագրի ընդունումը կամ բարձրացնել թվային տեխնոլոգիաների միջավայրում երեխայի իրավունքների նկատմամբ հատուկ ուշադրությունը ներկա գործողությունների պլանների, ռազմավարությունների և քաղաքականության մեջ կոնսոլիդացված ձևով:

83. Համապարփակ ազգային ռազմավարական մոտեցումը պետք է բացահայտի այն իրավասու մարմիններին, որոնք ունեն պատասխանատվություն և լիազորություններ, նախատեսված գործողություններն իրականացնելու համար, պարունակում են իրատեսական և ժամանակային թիրախներ, աջակցություն են ստանում համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների տեսքով և հիմնված են ընթացիկ գիտական հիմնավորումների վրա, ինչպես նաև բավարար հետազոտությունների և հաջող փորձի վրա:

84. Պետությունները պետք է ներգրավեն բոլոր շահագրգիռ կողմերին, ինչպիսիք են երեխաների օմբուդսմենները և մարդու իրավունքների այլ հաստատությունները, կրթության շահագրգիռ կողմերը, տվյալների պաշտպանության մարմինները, բիզնես կառույցները և քաղաքացիական հասարակությունը, ներառյալ երեխաների և երիտասարդների կողմից առաջնորդվող կազմակերպությունները, ազգային ռազմավարության նախագծման, մշակման, իրականացման և գնահատման հարցում: ազգային ռազմավարության կամ գործողությունների ծրագրի վերաբերյալ: Մասնավորապես, պետությունները պետք է ապահովեն, որպեսզի երեխաները խորհրդակցեն և հնարավորություն ստանան նպաստել այս գործընթացներին՝ իրենց համաձայնության և զարգացող կարողությունների համաձայն: Պատշաճ կերպով պետք է հաշվի առնվեն երեխաների կարծիքները: Երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես են իրենց տեսակետները հաշվի առնվել և ինչպես են այդ տեսակետները ազդել որոշումների կայացման գործընթացում: Համապատասխան ռեսուրսները պետք է հասանելի լինեն՝ երեխաների իմաստալից մասնակցությունն ապահովելու համար:

85. Մեթոդներ պետք է մշակվեն առաջընթացի գնահատման և բոլոր մակարդակներում ու բոլոր շահագրգիռ մարմինների կողմից ազգային ռազմավարության կամ գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունները գնահատելու համար: Գնահատումները պետք է անցկացվեն կանոնավոր կերպով՝ հաշվի առնելով թվային միջավայրում երեխայի իրավունքների հարգման, պաշտպանության և իրականացման համար համապատասխան ու արդյունավետ միջոցները և միջոցառումները:

86. Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն `լայնորեն տարածելու համար ընդունված ռազմավարությունների կամ գործողությունների ծրագրերի և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը:

Ոլորտային քաղաքականություն

87. Պետությունները պետք է երաշխավորեն, որ քաղաքականությունն ու նախաձեռնություններն իրականացնողները տեղեկացված են թվային միջավայրում երեխաների փորձի մասին ճշգրիտ և ժամանակակից ապացույցների միջոցով՝ երեխաների համար գոյություն ունեցող հնարավորությունները և ռիսկերը առանձնացնելու համար, հայտնաբերում են առաջացող միտումները և ուղղորդում են քաղաքականությունն ու ներուժը՝ թվային միջավայրում երեխաների բարեկեցությունն ապահովելու համար:

88. Պետությունները պետք է մշակեն և իրականացնեն այնպիսի քաղաքականություններ, որոնք աջակցում են երեխաների համար բարենպաստ կրթական, մշակութային և այլ ինստիտուցիոնալ ռեսուրսների մատակարարներին՝ դրանք հասանելի դարձնելով թվային միջավայրում ինչպես երեխաների, այնպես էլ ծնողների և խնամակալների համար:

89. Պետությունները պետք է ուժեղացնեն վերահսկողության մարմինների պատասխանատվությունը՝ թվային միջավայրում երեխայի իրավունքների նկատմամբ ստանդարտների և ուղեցույցների մշակման, իրականացման և կիրառման համար:

90. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ներառյալ քաղաքականության, գործառնական ուղեցույցների և/կամ վարքագծի կանոնների մշակումը, իրենց իրավասության շրջանակում գտնվող բիզնես կառույցների իրազեկվածության և աջակցության համար՝ նրանց դերերի, պարտականությունների, երեխայի իրավունքների վրա ազդեցության, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ կողմերի հետ համագործակցության համար:

91. Պետությունները պետք է մշակեն թվային միջավայրին անմիջականորեն վերաբերվող համապարփակ պաշտպանության և անվտանգության քաղաքականություն, որը կընդգրկվի երեխաների պաշտպանության ազգային համակարգում և որում ներդրում կունենան բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ երեխաները: Այս քաղաքականությունը պետք է հաշվի առնի առկա չափանիշները և ուղղորդումները, ինչպիսիք են Եվրոպայի Խորհրդի քաղաքականության ուղեցույցները երեխաներին բռնությունից պաշտպանելու ազգային ռազմավարությունների մասին (2009)[3]:

92. Պետությունները պետք է ռազմավարություն իրականացնեն՝ կանխելու իրենց քաղաքացիների համար՝ այլ պետության իրավասության շրջանակում տեղադրված երեխաների սեռական բռնության նյութերի հասանելիությունը, ըստ սեփական օրենսդրության կամ միջազգայնորեն ճանաչված չափանիշների:

93. Պետությունները պետք է ներգրավեն բիզնես կառույցներին կամ այլ շահագրգիռ կողմերին իրենց ոլորտային քաղաքականության իրականացման մեջ, մասնավորապես՝ պաշտպանության և անվտանգության քաղաքականության համակարգերին և դրա հետ կապված համապատասխան իրազեկման միջոցառումներին:

3 Անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի հանձնարարական (2009)՝ երեխաներին բռնությունից պաշտպանելու նպատակով որդեգրված ազգային ռազմավարությունների մասին:

Անդրադարձ երեխայի իրավունքների ռիսկերին և ազդեցությանը

94. Պետությունները պետք է պահանջեն բիզնես կառույցներից և այլ շահագրգիռ կողմերից՝ պատշաճ ջանքեր գործադրել՝ թվային միջավայրում երեխայի իրավունքների վրա իրենց ազդեցության բացահայտման, կանխարգելման և մեղմացման համար:

95. Պետությունները պետք է պահանջեն բիզնես կառույցներից պարբերաբար իրականացնել թվային տեխնոլոգիաների, ապրանքների, ծառայությունների և քաղաքականության վերաբերյալ երեխաների իրավունքների ռիսկի գնահատումներ և ցույց տալ, որ իրենք ձեռնարկում են խելամիտ և համաչափ միջոցներ նման ռիսկերը կառավարելու և մեղմելու համար:

96. Պետությունները պետք է խրախուսեն բիզնես կառույցներին զարգացնել, կիրառել և պարբերաբար վերանայել ու գնահատել երեխային ուղղված տնտեսական քաղաքականությունը, չափանիշները և վարքագծի կանոնները՝ թվային միջավայրում հնարավորությունները առավելագույնի հասցնելու և ռիսկերը հաղթահարելու համար:

97. Գիտակցելով, որ ծնողները, խնամակալները և այլոք կարող են ապավինել առցանց ծառայությունների օգտագործման պայմաններին, որպես երեխայի համար այդ ծառայության համապատասխանության ուղեցույց, հաշվի առնելով մատչելի տեխնոլոգիաները և չխախտելով ինտերնետ միջնորդների պատասխանատվությունը, պետությունները պետք է պահանջեն բիզնես կառույցներից՝ խելամիտ, համաչափ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել, ապահովելու համար, որ ծառայություն մատուցելու իրենց ընդհանուր դրույթներն ու պայմանները կիրառվեն:

Ինստիտուցիոնալ տեսանկյուններ, մեխանիզմներ և ծառայություններ

98. Պետությունները պետք է երաշխավորեն, որ մարդու և երեխաների իրավունքները երաշխավորող մարմիններն իրենց մանդատի շրջանակում հատուկ ուշադրություն են դարձնում թվային միջավայրի նկատմամբ երեխայի իրավունքներին, օրինակ, խթանելով թվային գրագիտության հմտությունները, սահմանելով թվային բովանդակության արտադրության բարձր որակի ստանդարտներ, երեխաների համար սոցիալական, կրթական ու մշակութային օգտակար ծառայությունների և խորհրդատվության ու մասնակցության համար երեխայակենտրոն մեխանիզմների ստեղծման միջոցով:

99. Պետությունները պետք է երաշխավորեն, որ գոյություն ունեն այնպիսի հաստատություններ կամ մեխանիզմներ, որոնք պատասխանատու են երեխաների, նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների բողոքները ստանալու, հետաքննելու և հասցեագրելու համար թվային միջավայրի նկատմամբ մարդու իրավունքների խախտման կամ չարաշահումների մասին, երեխայի համար բարենպաստ ընթացակարգերի կիրառմամբ, որոնք ապահովում են երեխայի գաղտնիության իրավունքը ողջ ընթացքում և տրամադրվում են վերահսկողության և հետևելու համար:

100. Իրավասու մարմինները պետք է տրամադրեն հասանելի, անվտանգ, գաղտնի, տարիքին և սեռին համապատասխան խորհրդատվություն, հաղորդման և բողոքարկման մեխանիզմներ, օրինակ, պետական մարմինների, թեժ գծերի, աջակցության հեռախոսագծերի, անվճար հավելվածների և առցանց հարթակների միջոցով, որոնք հանդիսանում են երեխայի պաշտպանության ազգային համակարգի հիմնական հարթությունները, երեխաների աջակցության ծառայությունների և իրավապահ մարմինների հետ համապատասխան կապերով, և, անհրաժեշտության դեպքում, արտաքին շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցությամբ: Սա

պետք է ներառի անվտանգ, երեխայակենտրոն անվճար հնարավորությունների տրամադրումը, ինչը հնարավորություն կտա երեխաներին թվային միջավայրում բռնության, շահագործման և չարաշահման դեպքերի մասին տեղեկացնել համապատասխան պատասխանատու մարմիններին: Նման մեխանիզմները պետք է ապահովեն երեխայի կամ նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների գաղտնիության և անանունության իրավունքը:

101. Պետությունները պետք է խրախուսեն հեռահաղորդակցային ընկերություններին՝ երեխաների օգնության գծերի համար սահմանել անվճար հեռախոսազանգեր՝ մուտքային անվճար զանգերի հեռախոսահամարի միջոցով:

102. Պետությունները պետք է ապահովեն այնպիսի արդյունավետ մեխանիզմի առկայությունը, որը թույլ է տալիս ցանկացած անձի անանուն կերպով տեղեկացնել կասկածելի առցանց անօրինական նյութերի առկայության մասին ՝ մասնավորապես երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների մասին:

103. Պետությունները պետք է, որպես երեխայի պաշտպանության համակարգի մի մաս, ապահովեն մատչելի և գենդերային զգայուն աջակցության ծառայություններ և օգնություն այն երեխաների համար, որոնց իրավունքները և գաղտնիությունը խախտվել են կամ ովքեր ենթարկվել են բռնության, սեռական շահագործման կամ չարաշահման թվային միջավայրում, ներառյալ այն ծառայությունները, որոնք ապահովում են երեխայի ֆիզիկական և հոգեբանական վերականգնումը ու սոցիալական վերաինտեգրումը և կանխում են նրանց կրկնազոհացումը:

104. Պետությունները պետք է ապահովեն, որ սեռական հանցագործների համար նախատեսված համապատասխան վերականգնողական ծրագրերը մատչելի լինեն նաև այն անձանց համար, ովքեր սեռական բնույթի հանցագործություններ են կատարել թվային միջավայրում, այդ թվում՝ երեխաների նկատմամբ, և այդ ծառայությունները հասանելի են ցանկացածի համար, ովքեր մտահոգված են, որ կարող են կատարել երեխայի մասնակցությամբ սեռական հանցագործության, այդ թվում՝ թվային միջավայրում:

Ներդրումներ, ռեսուրսներ և վերապատրաստում

105. Պետությունները պետք է ներդրումներ կատարեն սարքային ապահովման, ծրագրային ապահովման, կապի, համապատասխան թողունակության և ուսուցիչների վերապատրաստման համար՝ ուսուցման գործընթացին նպաստելու համար:

106. Պետությունները պետք է երաշխավորեն, որ սկզբնական և մասնագիտական վերապատրաստումը տեղեկացնում և հնարավորություններ է ընձեռնում մանկավարժներին՝ անհրաժեշտ հմտություններ և գրագիտություն ձեռք բերելու գործում, որպեսզի նրանք կարողանան աջակցել երեխաներին թվային միջավայրում իրենց իրավունքների իրացման հարցում:

107. Պետությունները պետք է երաշխավորեն, որ քաղաքականությունն ու միջոցները կրթական հաստատություններին տրամադրում են ռեսուրսներ, վերապատրաստում և աջակցություն, որոնք անհրաժեշտ են երեխաներին վերաբերող կանխարգելիչ և պաշտպանական միջոցներ ձեռնարկելու համար, այդ թվում՝ դպրոցում, թվային լրատվամիջոցներում տեղ գտած բռնության և չարաշահումների դեմ, այնպիսի եղանակներով, որոնք կանխարգելում են տարածումը, ապահովում են պատշաճ աջակցություն այն երեխաների համար, ովքեր ներգրավված են այդպիսի գործողությունների մեջ, տրամադրում են փոխհատուցում և վերականգնում:

108. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որ գործում են համապատասխան մեխանիզմներ՝ սքրինինգի ենթարկելու և ուղղորդումներ,

խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու համար այն ընկերություններին կամ գործատուին, ով որոշում է կայացնում աշխատանքներ անցկացնել երեխաների հետ՝ աշխատակազմի կամ կամավորների միջոցով, այդ թվում՝ թվային միջավայրում, կանխարգելելով և նվազեցնելով հանցագործ անցյալ ունեցող անձանց աշխատանքի ընդունումը կամ աշխատանքի կատարումը երեխաների համար վստահելի պաշտոնում:

109. Պետությունները պետք է հավաքեն համապատասխան ռեսուրսներ և ապահովեն իրավապահ մարմինների անձնակազմի, դատական համակարգի անդամների և երեխաների հետ ու երեխաների համար աշխատող անձնակազմի նախնական և շարունակական վերապատրաստումը: Նման վերապատրաստումը պետք է ուժեղացնի թվային միջավայրում երեխայի իրավունքների վերաբերյալ հմտությունները և գիտելիքները, այն ռիսկերը, որոնց երեխաները հանդիպում են առցանց, թե ինչպես նկատել այն ազդանշանները, որ երեխան կարող է դառնալ առցանց վնասների, բռնության, չարաշահման և շահագործման զոհ և ինչ քայլեր ձեռնարկել ի պատասխան:

110. Պետությունները պետք է ներդրումներ կատարեն հետազոտությունների և գիտելիքների զարգացման մեջ, ներառյալ թվային միջավայրում երեխայի իրավունքների ոլորտում երեխաների և երիտասարդների մասնակցությունը: Հետազոտությունները պետք է իրականացվեն անկախ որևէ շահագրգռվածությունից և պետք է ներառեն մանրամասնություններ՝ երեխաների փորձի մասին՝ ըստ տարիքի, սեռի, սոցիալ-տնտեսական վիճակի և այլ գործոնների տարբերակման, որոնք երեխաներին դարձնում են խոցելի կամ դիմացկուն թվային միջավայրում:

4.3. Ազգային մակարդակի համագործակցություն և համադրում

111. Պետությունները պետք է ունենան համապարփակ ռազմավարական և համակարգված բազմակողմանի մոտեցում, տեղեկացնելով և ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ ազգային, տարածաշրջանային ու տեղական իրավապահ և այլ մարմիններին, կրթական ու սոցիալական ծառայություն իրականացնող մարմիններին, մարդու իրավունքների անկախ ինստիտուտներին, տվյալների պաշտպանության մարմիններին, երեխաների հետ և երեխաների համար աշխատող մասնագետներին, քաղաքացիական հասարակությանը, այդ թվում՝ երեխաների և երիտասարդների կողմից առաջնորդվող կազմակերպություններին, բիզնես կառույցներին, արդյունաբերական ասոցիացիաներին, հետազոտողներին, ընտանիքներին և երեխաներին, իրենց դերին և գործառույթներին համապատասխան եղանակով:

112. Պետությունները պետք է նշանակեն մարմիններ կամ ստեղծեն համակարգող մեխանիզմ, որը կգնահատի թվային միջավայրում տեղի ունեցող այն զարգացումները, որոնք կարող են ազդել երեխայի իրավունքների վրա և որը ներառում է երեխաներին՝ իր որոշումների կայացման գործընթացում և երաշխավորել, որ իրենց ազգային քաղաքականությունները պատշաճ կերպով են արձագանքում այս զարգացումներին:

113. Պետությունները պետք է ստեղծեն համագործակցային համակարգեր, ընթացակարգեր և գործընթացներ իրավասու պետական մարմինների, անկախ մարմինների, քաղաքացիական հասարակության և բիզնես կառույցների միջև, հաշվի առնելով նրանց դերը, պարտականությունները, կարողություններն ու ռեսուրսները:

114. Պետությունները պետք է պահանջեն հեռահաղորդակցության ծառայությունների հարթակների կամ մատակարարներից՝ արագ և արդյունավետ գործողություններ կատարել ի պատասխան առցանց բռնության կամ չարաշահումների, որոնք կատարվել են հասակակիցների կողմից և համագործակցել ազգային մարմինների հետ:

115. Պետությունները պետք է ներգրավեն բիզնես կառույցներին, ինչպիսիք են՝ համացանցային ծառայություններ մատուցողները և սոցիալական ցանցերի մատակարարները, ակտիվ դեր ունենալ անօրինական բովանդակության կանխարգելման և վերացման հարցում, ինչպես սահմանված է օրենքով կամ դատական և այլ իրավասու մարմնի կողմից:

116. Պետությունները պետք է խրախուսեն քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին, որպես թվային միջավայրի մարդու իրավունքների բնագավառի խթանման կարևորագույն կատալիզատորներ, ակտիվորեն մշտադիտարկել, գնահատել և խթանել երեխաների հմտությունները, բարեկեցությունը և համապատասխան տեղեկատվական գրագիտությունն ու վերապատրաստման նախաձեռնությունները, ներառյալ այլ շահագրգիռ մարմինների կողմից ձեռնարկած գործողությունները և տարածել իրենց բացահայտումներն ու արդյունքները:

117. Պետությունները պետք է խրախուսեն բոլոր մասնագիտական լրատվամիջոցներին, մասնավորապես, հանրային լրատվամիջոցներին, ուշադիր լինել իրենց դերին՝ որպես տեղեկատվության տրամադրման կարևոր աղբյուր երեխաների, ծնողների կամ խնամակալների ու մանկավարժների համար՝ թվային միջավայրում երեխայի իրավունքների հետ կապված, հաշվի առնելով կարծիքն ազատորեն արտահայտելու և տեղեկատվության ազատության վերաբերյալ միջազգային և եվրոպական ստանդարտներն ու լրատվամիջոցների ազատությունը:

5. Միջազգային համագործակցություն և համադրում

118. Պետությունները պետք է խրախուսվեն թվային միջավայրում երեխայի իրավունքների խթանմանն ու պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերի վավերացման և իրականացման հարցում: Այս փաստաթղթերն ընդգրկում են, մասնավորապես, ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունները Երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին (2000թ.), ինչպես նաև Հաղորդակցության կարգի վերաբերյալ (2011թ.) Եվրոպայի խորհրդի կոնվենցիան Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին (ETS No. 108), Կիբեռհանցագործության մասին կոնվենցիան (ETS No. 185) և դրա լրացուցիչ արձանագրությունը՝ Համակարգչային համակարգերով կատարվող ռասիստական և այլատյացության բնույթի գործողությունների քրեականացման վերաբերյալ (ETS No. 189), Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No. 197) և սեռական շահագործման ու չարաշահումների դեմ երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No. 201):

119. Պետությունները պետք է համագործակցեն միմյանց հետ, կիրառելով համապատասխան միջազգային և տարածաշրջանային փաստաթղթեր ու միջոցներ, առավելագույն չափով՝թվային տեխնոլոգիաների միջավայրում երեխայի իրավունքների հարգելու, պաշտպանության և իրականացման նպատակով: Մասնավորապես, նրանք պետք է.

ա. ունենան համապատասխան իրավական հիմքեր օժանդակություն ցուցաբերելու համար և, անհրաժեշտության դեպքում, պետք է ունենան այլ պետությունների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար պայմանագրեր, պայմանավորվածություններ կամ այլ մեխանիզմներ,

բ. երաշխավորել, որ իրենց իրավասու մարմինները կարող են արագ, կառուցողական և արդյունավետ կերպով օգտագործել տեղեկատվության և այլ տեսակի օգնության հարցումների արդյունավետ փոխանցման ու կատարման հստակ ուղիներ կամ մեխանիզմներ,

գ. ունենալ հստակ և արդյունավետ գործընթացներ՝ հարցումների առաջնահերթության ընդգծման և ժամանակին կատարելու համար,

դ. չարգելել կամ չտեղադրել ոչ ողջամիտ կամ անտեղի սահմանափակող պայմաններ՝ օգնության կամ համագործակցության տրամադրման վերաբերյալ:

120. Պետությունները պետք է օժանդակեն տարածաշրջանային և միջազգային կարողությունների զարգացման ջանքերին՝ բարելավելու քաղաքականությունն ու գործառնական միջոցները՝ թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար, այդ թվում՝ կրթության և իրազեկման բարձրացման գործիքների համախմբումը և փոխանակումը:

121. Պետությունները պետք է համագործակցեն՝ նպատակ ունենալով նպաստել երկրներում և շահագրգիռ կողմերի միջև բովանդակության դասակարգման ու խորհրդատվական պիտակների ստանդարտացմանը՝ սահմանելու այն, ինչը համապատասխանում է և չի համապատասխանում երեխաներին:

122. Պետությունները պետք է հրատապ քայլեր ձեռնարկեն, որպեսզի երաշխավորեն, որ իրենց իրավապահ մարմինները կարող են կապվել երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների հարցերի հետ առնչվող Ինտերպոլի տվյալների բազայի հետ:

123. Հաշվի առնելով իրենց կարևոր դերը համացանցի կառավարման հետ կապված, պետությունները պետք է ակտիվորեն համագործակցեն Նշանակված անունների և թվերի համացանցային կորպորացիայի հետ (ICANN)՝ հասնելու քաղաքականության արդյունավետ իրականացմանը, որը կնպաստի երեխայի իրավունքների խթանմանը կամ պահպանմանը, մասնավորապես, ապահովելով, որպեսզի այն վեբ հասցեները, որոնք ինքնակամ գովազդում կամ տարածում են երեխայի նկատմամբ սեռական չարաշահումների մասին կամ երեխաների դեմ այլ հանցագործությունների մասին նյութերը բացահայտվեն և հեռացվեն կամ չգրանցվեն:

124. Այս ուղեցույցների իրականացմանը նպաստելու համար անդամ պետությունները պետք է ամրապնդեն իրենց համագործակցությունը համապատասխան միջկառավարական մարմինների, միջազգային ցանցերի և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Երեխաների իրավունքները թվային տեխնոլոգիաների միջավայրում հարգելու, պաշտպանելու և իրացնելու ուղեցույցը ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, 2018 թվականի հուլիսի 4-ին:

Այս հրատարակությունը պարունակում է առաջարկություններ, որոնք հասցեագրված են Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին, ստորև նաև տրվում են օգտակար, թեմատիկ ուղղորդումներ՝ պետություններին առաջնորդելու հիմնարար սկզբունքների և իրավունքների հարցում, թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու գործառնական սկզբունքներ և միջոցներ, ազգային համակարգեր և միջազգային համագործակցություն ու համադրություն:

Ուղեցույցի նպատակն է թվային միջավայրի հաճախակի բարդ աշխարհը կառուցելու և պահպանելու համար աջակցել պետություններին և շահագրգիռ այլ կողմերին՝որդեգրել համակողմանի և ռազմավարական մոտեցումներ: Այս միջավայրում երեխաների փոխգործակցությունն ու անվտանգությունը ապահովելը առաջնահերթ է: Քննարկված բազմաթիվ թեմաներից են նաև անձնական տվյալների պաշտպանությունը, երեխայակենտրոն բովանդակության տրամադրումը՝ ըստ նրանց զարգացող հնարավորությունների, թեժ գծերը և օգնության գծերը, խոցելիությունը և դիմակայունությունը, ինչպես նաև բիզնես կառույցների դերը և պատասխանատվությունը: Բացի այդ, ուղեցույցը կոչ է անում պետություններին ներգրավել երեխաներին, այդ թվում՝ որոշումների կայացման գործընթացներում, երաշխավորելով, որ ազգային քաղաքականությունը համապատասխանում է թվային միջավայրի զարգացման շարունակական գործընթացին:

Այս ուղեցույցը նախատեսված է մեծ լսարանի համար, այդ թվում՝ պետական իրավասու մարմինների, մասնագետների, քաղաքացիական հասարակության, ձեռնարկատիրական և արդյունաբերական հատվածների, ընտանիքների և երեխաների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ARM

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը հանդիսանում է մայրցամաքի մարդու իրավունքների առաջատար կազմակերպությունը: Այն ներառում է 47 անդամ պետություններ, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ պայմանագիր, որը նախատեսված է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանության համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետություններում Կոնվենցիայի իրականացումը:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE